սի խանը տեղական բէգերի հետ աղա Պողոսի մասին խօսք եղած ժամանակ, երբ բէգերից մինը շատ գովում է նորան, ասում է, ոչ թէ Պողոսը բէգ է, այլ խան է, այնուհետեւ անուանում են նորան խան Պողոս բէգ. այդ հանդամանքը պատա-

ԽԱՆ ՊՕՂՈՍ ԼԱԼԱՅԵԱՆՑ

հում է 1760—70 թուականի միջոցում. այն օրից մինչեւ ցայսօր Լալայեանց ազնուական տոհմին կոչում են և խան Պողոսեանց։ Այդ ժամանակամիջոցում որպէս և առաջ Ճիրվանայ խանութիւնը յաճախակի փոփոխութեան է ենթարկվում. երկիրը մէկ խանից միւսի ձեռքն է ընկնում. երբեմն երկիրը տակն ու վերայ են անում մինը միւսի վերայ յարձակուած ժամանակ։ Թշուառ հայերը այդպիսի ժամանակում հալածւում կո-